Immigratie- en Naturalisatiedienst
Ministerie van Justitie en Veiligheid

Ինչ է նշանակում ձեր պարագայում ոչ ցանկալի օտարերկրացի հայտարարվելը

Դուք ստացել եք ոչ ցանկալի լինելու մասին հայտարարություն Ներգաղթի և Հպատակագրման Ծառայության կողմից (IND): Ձեզ տրված որոշման մեջ նշվում է, թե ձեզ ինչու են ոչ ցանկալի օտարական ճանաչել: Այս թղթապանակում կարող եք կարդալ, թե ինչ է իրենից ներկայացնում ոչ ցանկալի լինելու մասին գրված հայտարարությունը և, թե այն ձեր պարագայում ինչ է նշանակում:

1 . Ի՞նչ է իրենից ներկայացնում ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությունը:
2 . Որքա՞ն ժամանակ է տևում ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությունը:
3 . Ի՞նչ է նշանակում տեղեկատվական համակարգում այդ մասին ահազանգը:
4 . Ե՞րբ կհեռացվեն ձեր տվյալները Կատարում և ահազանգի փոխանցում (E&S) կամ Շենգենյան տեղեկատվական համակարգ (SIS) / համակարգերից:
5 . Ի՞նչ կարող է սպասվել, եթե դուք, այնուամենայնիվ, մնաք Նիդերլանդներում:
6 . Ի՞նչ կարող եք անել, եթե համաձայն չլինեք ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությանը:
7 . Ե՞րբ կարող եք նորից մեկնել Նիդերլանդներ:
8 . Ինչպե՞ս պետք է ներկայացնեք դիմում, որպեսզի չեղարկեն ձեր նկատմամբ կայացված՝ ոչ ցանկալի օտարական լինելու հայտարարությունը:
9 . Ի՞նչ է պետք անել հարցեր ունենալու դեպքում:

1. Ի՞նչ է իրենից ներկայացնում ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությունը

Ոչ ցանկալի լինելու մասին հայտարարության մեջ նշվում է, որ դուք ոչ ցանկալի օտարական եք Նիդերլանդներում: Դուք կստանաք ոչ ցանկալի լինելու մասին հայտարարություն, եթե IND-ն որոշի, որ դուք վտանգ եք ներկայացնում Նիդերլանդների համար: Այն մի միջոց է այն անձանց նկատմամբ, ովքեր սովորաբար կատարել են որևէ ծանր, հանցավոր արարք: Հաճախ դա դիտվում ուղղակի հանցագործություն: Դուք պետք է անհապաղ հեռանաք Նիդերլանդներից՝ ոչ ցանկալի լինելու մասին հայտարարության ստանալու պատճառով: Դրանից հետո դուք այլևս չեք կարող մուտք գործել Նիդերլանդներ: Ձեզ մասին կգրանցեն տեղեկատվական համակարգում, առ այն, որ դուք համարվում եք ոչ ցանկալի, և որ այդ մասին տրվել է հայտարարություն: Կարդացեք 3-րդ հարցի տակ, թե ինչ է ահազանգ է գրանցվել:

2. Որքա՞ն ժամանակ է ուժի մեջ ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությունը

Ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությունը չունի վերջնական ամիս / ամսաթիվ և այն ավարտվում է միայն այն ժամանակ, երբ IND-ն այդ մասին տալիս է մի նոր որոշում: Դա հնարավոր կլինի, եթե դուք դիմեք ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությունը հանելու համար: Հարց 8-ի մեջ նկարագրված է, թե ինչ պետք է անեք այն չեղարկելու համար:

3. Ի՞նչ է նշանակում ազդարարում տեղեկատվական համակարգում

Ձեր մասին կտրվի ահազանգ,, առ այն, որ դուք համարվում եք ոչ ցանկալի օտարական և որի մասին արդեն տրվել է հայտարարություն: Ազդարարված լինելը կամ ահազանգ տալը նշանակում է, որ կառավարությունը ձեր անունը գրանցել է տեղեկատվական համակարգի մեջ: Ահազանգի միջոցով կառավարությունը կարող է տեսնել այն, որ դուք ոչ ցանկալի օտարերկրյա քաղաքացի եք: Որոշման մեջ նշվում է նաև, թե որ համակարգում եք ազդարարված՝ ձեզ ճանաչվելու հարցը: Գործում են երկու համակարգեր.

- Կատարում և ահազանգի փոխանցում (E&S): Սա Նիդերլանդների թագավորության սահմանապահ ոստիկանության և ոստիկանության տեղեկատվական համակարգն է: Միայն ոստիկանությունը և ռազմական ոստիկանությունը կարող են ստուգել Կատարում և ահազանգի փոխանցում (E&S) համակարգի տվյալները:

- Շենգենյան տեղեկատվական համակարգ (SIS) Շենգենյան գոտու երկրների սահմանապահներն ու ոստիկանները, ովքեր կարող են ստուգել Կատարում և ահազանգի փոխանցում (E&S) համակարգում նշված տվյալները: Ստուգելուց հետո նրանք կարող են ձեզ կանգնեցնել, որից հետո թույլ չեն տա մուտք գործել այս երկիր: Այս մասին կարող եք կարդալ հետևյալ կայքերում ՝ www.ind.nl/schengengebied of www.ind.nl/schengenarea, որպեսզի կարողանաք տեղեկանալ, թե որ Շենգենյան երկրներն են դրանք:

4. Ե՞րբ կհեռացվեն ձեր տվյալները Կատարում և ահազանգի փոխանցում (E&S) կամ Շենգենյան տեղեկատվական (SIS) համակարգերից:

Եթե դուք խնդրել եք չեղարկել անցանկալիության մասին հայտարարությունը, և եթե այս հարցումն արդեն հաստատվել է:

5. Ի՞նչ կլինի, եթե դուք, այնուամենայնիվ, դեռ գտնվում եք Նիդերլանդներում:

Նիդերլանդներում գտնվելն այդ դեպքում պատժելի է: Դուք կարող եք ստանալ մինչև 6 ամիս ազատազրկում կամ մի քանի հազար եվրո տուգանք: Այս մասին նշված է Քրեական օրենսգրքի 197-րդ հոդվածում:

6. Ի՞նչ կարող եք անել, եթե համաձայն չեք ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությանը:

Դուք կարող եք ներկայացնել առարկ IND բաժին: Ձեր ստացած որոշման մեջ գրված կլինի, թե ինչպես դա անել:

7. Ե՞րբ կարող եք նորից մեկնել Նիդերլանդներ:

Եթե IND բաժինը չեղարկի ձեր ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությունը: Դա տեղի է ունենում միայն այն դեպքում, եթե դուք ցանկանաք դիմել այդ հարցով, և IND բաժինը հաստատի ձեր դիմումը: Խիստ հատուկ և հրատապ իրավիճակների դեպքում դուք կարող եք խնդրել ժամանակավորապես չեղարկելու ձեզ տրված ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությունը:

8. Ի՞նչ պետք է անեք ոչ ցանկալի օտարական լինելումասին հայտարարության չեղարկման կայացման համար

Դուք կարող եք դիմել ոչ ցանկալի լինելու մասին հայտարարության չեղարկման համար: Այդ քայլին գնալու համար կարող եք օգտագործել մի ձևաչափ, *որպեսզի չեղարկեք անցանկալիության կամ մուտքի արգելքի մասին հայտարարությունը* (9004 կամ 9504) կայքում, լրացրեք այն և ուղարկեք IND- բաժին: Կամ էլ կարող եք նամակ գրելու միջոցով բացատրություն ուղարկել IND- բաժին, ըստ որի խնդրել ոչ ցանկալի լինելու մասին հայտարարության (ժամանակավոր) չեղարկման համար: Ինչպե նաև գրեք հետևյալ տեղեկությունները.

• Որքա՞ն ժամանակ եք (անընդմեջ) գտնվել Նիդերլանդներից դուրս:
• Անկախ ամեն ինչից, թե այդ ընթացքում կատարել եք որևէ ծանր հանցագործություն(եր):
• Անկախ ամեն ինչից, թե դուք ներկայումս հետապնդման մեջ եք որևէ քրեական հանցագործության համար, թե ոչ:

Նաև մեկ ուրիշը ձեր անունից կարող է դիմել չեղարկման: Այնուհետև դուք պետք է այդ անձին տաք գրավոր պաշտոնական թույլտվություն՝ ձեր անունից քայլեր ձեռնարկելու համար: Դուք պետք է ստորագրեք այդ փաստաթուղթը: Դա կոչվում է պաշտոնական թույլտվություն, որն էլ պետք է կցեք այն նամակին, որը պետք է դիմեք՝ չեղարկելու ոչ ցանկալի լինելու մասին հայտարարությունը:

Ուղարկեք ձևաչափ կամ նամակ ՝
IND- Վերնագիր և Ինքնություն
Փոստարկղ 10
9560 ԱԱ Տեր Ապել

Անցանկալիության մասին հայտարարության չեղարկման դեպքերը
IND բաժինը կարող է (ժամանակավոր) չեղարկել ձեր՝ ոչ ցանկալի օտարական լինելու մասին հայտարարությունը հետևյալ դեպքերում.
• Եթե անհրաժեշտ է, որ դուք վերադառնաք Նիդերլանդներ ձեր ընտանիքին վերաբերող որևէ կարևոր իրադրության պատճառով:
• Եթե անհրաժեշտ է, որ դուք վերադառնաք Նիդերլանդներ դատարանում որևէ ցուցմունք տալու համար:
• Եթե անհրաժեշտ է, որ դուք վերադառնաք Նիդերլանդներ, այս երկրում ձեզ վերաբերող տեղ գտնելիք որևէ քրեական գործի վարույթին մասնակցելու համար:
• Եթե ոչ ցանկալի օտարական լինելու մասին հայտարարությունը հակասում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային (ՄԻԵԴ):
• Եթե դուք Նիդերլանդներում բնակության իրավունք ստանաք նախկինում տեղ գտած ոչ ցանկալի օտարական լինելու մասին հայտարարությունից հետո:

Ոչ ցանկալի օտարական լինելու մասին հայտարարությունը չեղարկող փաստաթղթեր
Դուք պետք է ձևաչափին կամ նամակին կցեք և ուղարկեք հետևյալ փաստաթղթերն ու տեղեկությունները .
• Տալով բացատրություն առ այն, թե ինչու է անհրաժեշտ ձեր իրավիճակում ոչ ցանկալի օտարական լինելու մասին հայտարարության չեղարկումը:
• Ձեր ամբողջական անձնական տվյալները և այլ անունները (փոխանունները), որոնք օգտագործել եք նախկինում:
• Ձեր բոլոր անձնագրերի բոլոր էջերի պատճենները, որոնք դուք ունեցել եք ոչ ցանկալի օտարական լինելու մասին հայտարարություն ստանալուց հետո: Կամ այլ փաստաթուղթ / փաստաթղթեր, ըստ որի թույլատրվում է ճանապարհորդել և հատել սահմանը:
• Երկրների և վայրերի տեսություն և ապացույցներ, որտեղ որ դուք եղել եք ոչ ցանկալի օտարական լինելու մասին հայտարարությունից հետո: Դա կվկայի այն մասին, որ դուք գտնվում եք Նիդերլանդներից դուրս՝ չեղարկման համար ներկայացված դիմումի ընթացքում: Կամ, որ դուք վերադարձել եք որևէ ԵՄ / ԵՏՄ երկիր, որտեղ ձեզ թույլատրվում է ապրել: Տես՝ www.ind.nl/eueer և www.ind.nl/en/eueea կայքը, տեղեկանալու, թե որոնք են ԵՄ/ԵՏՄ երկրները:
• Ներկայացնել պաշտոնական փաստաթղթեր ամեն մի երկրի կառավարության կողմից, որտեղ դուք եղել եք ոչ ցանկալի օտարական՝ մինչ այս երկրում ոչ ցանկալի օտարական լինելու մասին հայտարարություն ստանալը: Որում պետք է նշի նաև այն մասին, որ դուք այդ երկրում որևէ ծանր հանցագործություն չեք կատարել և, որ դուք ներկայումս քրեական հետապնդման չեք ենթարկվում այդ երկրում որևէ հանցավոր արարքի համար:
• Եթե դուք ցանկանում եք ժամանակավորապես գտնվել Նիդերլանդներում, ապա խնդրում ենք ուղարկել նաև հետևյալ տեղեկատվությունը.
o Ձեր Նիդերլանդներ ժամանելու ամիս ամսաթիվը և Նիդերլանդներ մուտք գործելու վայրը:
o Թռիչքի և հետադարձ թռիչքի չվերթի համարները:
o Նիդերլանդներում գտնվելու բոլոր վայրերի անունների ցանկը: Եվ որպես ապացույցներ այն մասին, որով կհաստատեք որոշակիություն ձեր կեցության և դրա ծախսերի վերաբերյալ:
o Քրեական որևէ գործին վերաբերելու դեպքում՝ տեղեկատվություն այդ քրեական գործի իրադրության և ընթացքի մասին:
• Եթե դուք ցանկանում եք մեկ ուրիշին թույլտվություն տալ ձեր անունից չեղարկամ հայտարարման պահանջի համար, ապա դա պետք է կատարել ձեր գրավոր թույլտվությամբ / ստորագրությամբ:

Ձեռք բերեք օտարերկրյա պաշտոնական փաստաթղթեր օրինականացված և թարգմանված հոլանդերեն, անգլերեն, ֆրանսերեն կամ գերմաներեն լեզուներով: Կարդացեք օրինականացման և թարգմանության մասին տեղեկությունների մասին հետևյալ կայքերում. www.ind.nl/legalisatie-vertaling կամ www.ind.nl/legalisation-translation:

9. Ի՞նչ պետք է անեք հարցեր ունենալու դեպքում

- Այցելեք մեր կայքը հետևյալ հասցեով ՝ www.ind.nl/legalisatie-vertaling of www.ind.nl/legalisation-translation:
- Զանգահարեք IND բաժին տեղեկատվական հետևյալ հեռախոսահամարին ՝ + 31 88 043 04 30 : Այս հեռախոսահամարին կարող եք զանգահարել երկուշաբթի օրվանից մինչև ուրբաթ օրը ՝ ժամը 09:00 - 17:00-ը:

Հրապարակման բովանդակությունից ոչ մի իրավունք չի կարող բխել: Եթե թարգմանության արդյունքում առաջանա մեկնաբանության տարբերություն, ապա գերակայությունը կլինի հոլանդերեն տարբերակը: Այս հրապարակման տեքստը կարող է օգտագործվել հրապարակման աղբյուրը նշելու պայմանով: